# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /ՄՈԴՈՒԼ 4/

| | |
|---|---|
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ |
| ԱՄԲԻՈՆ | ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԴՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈԴՈՒԼ | ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /ՄՈԴՈՒԼ 4/ |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ | 1410B/4/01.4 , 8 ՄՈԴՈՒԼ |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ |
| ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ | 2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ | •Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության զարգացած և ուշ միջնադարի քաղաքական, տնտեսական, ընկերային ու մշակութային հարաբերությունների վերաբերյալ,<br>•զարգացնել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողություններ ու հմտություններ,<br>•ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ,<br>•դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի,<br>•որպես ազգի հարատևման գրավականի, պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում (Բագրատունիների Հայոց թագավորության, Կիլիկիայի հայկական պետության օրինակներով)<br>•որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության գիտակցության ձևավորում,<br>•հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն: |
| ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ | ԳԻՏԵԼԻՔ<br>• Բացատրել Հայոց թագավորության վերականգնման նախադրյալները եւ վերականգնումը, հայ-բյուզանդական հարաբերությունները և պայքարը արաբական նվաճողների դեմ, Վասպուրականի Արծրունյաց թագավորության առաջացումը: Ներկայացնել Հայաստանը Աշոտ I-ի, Աշոտ II Երկաթի, Աբաս Բագրատունու, Աշոտ III Ողորմածի, Սմբատ II Տիեզերակալի օրոք: Բացատրել հայկական ենթակա թագավորությունների առաջացման պատճառները: Հայաստանի հզորացումը Գագիկ I օրոք: Ներկայացնել պետական կառավարման համակարգը, բանակը, |

| | |
|---|---|
| | Հայոց եկեղեցին, ավատատիրական հարաբերությունների զարգացումը, բնակչությունը, Բագրատունյաց թագավորության տնտեսական կյանքի վերելքը: Բացատրել թագավորության թուլացման եւ անկման պատճառները:<br>• Հայոց պետականությունը XI-XIV դարերում. Ներկայացնել Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետեւանքները, Հայերի զանգվածային արտագաղթը, Հայկական թագավորությունների ու իշխանությունների գոյամարտը սելջուկ թուրքական արշավանքների եւ տիրապետության շրջանում: Ներկայացնել ազատագրական պայքարը մահմեդական ամիրայությունների դեմ, Զաքարյան իշխանական տոհմի դերը Հայաստանի հյուսիս-արեւելյան շրջանների ազատագրման գործում, իշխանական նոր տների առաջացումը, մոնղոլական ասպատակությունները, պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ, հայկական իշխանական տները XIII դարի II կեսին- XIV դարում:<br>• Հայկական պետությունը Կիլիկիայում. Բացատրել հայկական պետականության ստեղծման նախադրյալները Կիլիկիայում, Հայկական իշխանությունների առաջացումը եւ Ռուբեն I-ի գործունեությունը, հարաբերությունները խաչակիրների հետ, Ռուբինյան իշխանության ընդլայնումն ու ամրապնդումը, կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա: Ներկայացնել քաղաքական դրությունը մերձավոր Արեւելքում Լևոն I Մեծագործի կառավարման շրջանում, Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը, Հեթումյանների արքայատոհմի հաստատումը,Կիլիկիայի հայկական պետության հարաբերությունները խաչակիրների, մոնղոլների և մամլուքների հետ, պապականությունը և Կիլիկյան Հայաստանը, ունիթորական և հակաունիթորական շարժումը, թագավորության թուլացման ու անկման պատճառները, պետականության պահպանումը Կիլիկիայի լեռնային շրջաններում, Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը, պետական կառավարման համակարգը, բանակը, ավատատիրական հարաբերությունների առանձնահատկությունները, քաղաքները եւ քաղաքային կյանքը, բնակչությունը, Արևելքի եւ Եվրոպայի հետ քաղաքակրթական շփումներն ու փոխազդեցությունները:<br>• Հայոց քաղաքակրթությունը ուշ միջնադարում. Ներկայացնել Հայկական անկախ պետականության անկման հետեւանքները, վաչկատուն ցեղերի դեմպայքարը: Բացատրել Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռն Էջմիածնում վերահաստատելու անհրաժեշտությունն ու նախադրյալները: Ներկայացնել Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները, Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում, քաղաքական դրությունը մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին, |

Հայաստանը և թուրք-պարսկական պատերազմները, դրանց հետևանքները:

- Ներկայացնել Հայաստանի ազատագրական պայքարի նոր փուլի սկզբնավորումը (Ստեփանոս Սալմաստեցի, Աբգար Դպիր Թոխաթեցի), Հայկական իշխանությունները որպես Հայոց պետականության կրողներ, Արցախի, Սյունիքի մելիքությունները, Զեյթունի իշխանությունը: Բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները:
- Մշակույթի վերելքը X-XIV դարերում. Բացատրել մշակույթի վերելքի պատմական պայմանները, կրթական գործի առաջընթացը, բարձրագույն դպրոցների եւ համալսարանների գործունեությունը: Ներկայացնել իրավագիտությունը, փիլիսոփայությունն ու աստվածաբանությունը, գրականությունն ու արվեստը, հայկական մշակութային վերածննդի հիմնական արդյունքները:
- Մշակույթը դժվարին ժամանակներում (XV-XVII դարի առաջին կես): Բացատրել հայկական մշակույթի պահպանման ու զարգացման պայմանները: Ներկայացնել դպրոցը, պատմագրությունը, բնագիտությունը և բժշկությունը, տպագրությունը, արվեստը:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

- Գնահատել Բագրատունիների դարաշրջանի նշանավոր իրադարձությունները, երևույթներն ու փաստերը:
- Գնահատել Հայոց եկեղեցու դերը Բագրատունյաց թագավորության վերականգնման ու ամրապնդման գործում:
- Գնահատել Բագրատունիների դարաշրջանի քաղաքական, ազգային, հոգևոր կառույցների, բարձրագույն դպրոցների ու անհատների դերը:
- Օգտվելով սկզբնաղբյուրներից եւ պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ վերլուծել և ինքնուրույն կարծիք ներկայացնել Բագրատունյաց ժամանակաշրջանի քաղաքական , մշակութային, հասարակական, տնտեսական անցքերի վերաբերյալ:
- Վերլուծել Անիի Բագրատունիների կենտրոնական թագավորության եւ տեղական թագավորությունների միջեւ եղած քաղաքական պայքարն ու ենթակայական հարաբերությունները:
- Մեկնաբանել Բագրատունյաց թագավորության հզորացման եւ անկման ներքին ու արտաքին պատճառները:
- Գնահատել Զաքարյան իշխանական տոհմի դերը Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ազատագրման գործում:
- Մեկնաբանել Կիլիկիայում կրոնական-քաղաքական խմբավորումների դիրքորոշումները և փորձել գնահատել դրանց ազդեցությունը պետության հետագա

| | |
|---|---|
| | ճակատագրի վրա:<br>• Օգտվելով սկզբնաղբյուրներից ու պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ վերլուծել և ինքնուրույն կարծիք ներկայացնել Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու հոգևոր կյանքի վերաբերյալ<br>• Վերլուծել Կիլիկիայի Հայկական թագավորության թուլացման ու անկման պատճառները<br>• Գնահատել Ամենայն Հայոց կաթողիկոսության Էջմիածնում վերահաստատելու փաստը:<br>• Վերլուծել թուրք-պարսկական տիրապետության հետևանքները հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, ազգային ու կրոնական կյանքում:<br>• Գնահատել հայկական մշակութային ձեռքբերումները եւ նրանց տեղը համաշխարհային մշակույթային գանձարանում:<br><br>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ<br>• Հիմնարար գիտելիքներ՝ Հայոց պատմության ուսուցանվող ժամանակաշրջանի վերաբերյալ:<br>• Մանկավարժական հիմնարար սկզբունքների հիման վրա, դպրոցում ուսուցման գործի արդյունավետ կազմակերպում: |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ | • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 5 /150<br>• ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ – 64<br>• ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 32<br>• ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ – 32<br>• ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ – 4 |
| ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ | «Հայոց պատմություն» (հին շրջան եւ վաղ միջնադար), «Հայաստանի պատմական աշխարհագրություն», «Հայոց պատմության աղբյուրագիտություն» բուհական դասընթացների իմացություն |
| ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ | - Դասախոսություն, պատմել<br>- զրույց<br>- բանավեճ<br>- սեմինար պարապմունքներ<br>- կուրսային աշխատանքների կատարում<br>- սկզբնաղբյուրների ուսումնասիրություն<br>- զննական մեթոդներ /քարտեզների ուսումնասիրություն, աշխատանք ուրվագծային քարտեզներով/ |
| | 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ<br>1.1Հայաստանի անկախության վերականգնման նախադրյալները: Հայկական թագավորության վերականգնումը<br>1.2 Բագրատունյաց թագավորության ամրապնդումն ու զարգացումը<br>1.3 Պայքար Ատրպատականի Սաջյան ամիրայության դեմ: Արաբների վերջնական վտարումը Հայաստանից |

| | |
|---|---|
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | 1.4 Երկրի տնտեսական ու մշակութային վերելքը X դարի I կեսին: Անին մայրաքաղաք<br>1.5 Արաբական ամիրայությունները Հայաստանում<br>1.6 Վասպուրականը IX-XI դարերում: Տարոնի եւ Արցախի իշխանությունները<br>Կարսը IX-XI դարերում: Տաշիր-Ձորագետը և Հայաստանի Հյուսիս-արևմտյան գավառները IX-XI դարերում<br>1.8 Սյունիքը IX-XI դարերում<br><br>2.ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶՈՐԵՂԱՑՈՒՄԸ: ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ<br><br>2.1Բագրատունյաց թագավորության հետագա զորեղացումը<br>2.1 Բագրատունյաց թագավորության ճգնաժամը եւ անկումը<br>2.2 Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքը IX-XI դարերում<br>2.3 Բագրատունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, հասարակության սոցիալական կառուցվածքը<br><br>3. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI-XIV ԴԱՐԵՐՈՒՄ<br>3.1 Հայաստանը բյուզանդական տիրապետության ներքո<br>3.2 Հայաստանը սելջուկյան պետության կազմում<br>3.3 Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը XI-XII դարերում<br>3.4 Հայ-վրացական զինակցությունը և հայկական հողերի ազատագրումը<br>3.5 Զաքարյանների իշխանապետությունը Հայաստանում<br>3.6 Հայաստանը մոնղոլական տիրապետության շրջանում: Մոնղոլների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը<br>3.7Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում<br>3.8 Կիլիկյան Հայաստանի ամրապնդումը<br>3.9 Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII դարում<br>3.10Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը<br>3.11Կիլիկիայի հայկական թագավորության ներքին ու միջազգային դրությունը XIII դարի վերջին եւ XIV դարի սկզբին: Թագավորության անկումը<br>3.12 Հայկական մշակույթը X-XIV դարերում<br>3.14 Հայաստանը XV դարում<br>3.15 Հայաստանը եւ թուրք-պարսկական պատերազմները<br>3.16 Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI-XVIII դարերում<br>3.17 Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Արևմտյան Հայաստանում XVI-XVIII դարերում |

| | |
|---|---|
| | 3.18 Հայկական մշակույթը XV-XVIII |

| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| ՀԻՄՆԱԿԱՆ | 1. Հայոց պատմություն (դասախոսությունների փաթեթ)<br>2. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ. հատոր 3, Երևան, 1976<br>3. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ, հատոր IV, Երևան, 1972<br>4. Հայ ժողովրդի պատմություն, Ժամկոչյան, Աբրահամյան, Մելիք-Բախշյան, Պողոսյան, Երևան, 1975 |

| | |
|---|---|
| ԼՐԱՑՈՒՑԻՉ | 1. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Երևան, 1996<br>2. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ.Նալբանդյան, Երևան, 1965<br>3. «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910<br>4. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Պրոֆ. Դր.Լ.Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1934<br>5. «Թովմայի վրդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Տփղիս, 1917:<br>6. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950<br>7. Կիրակոս գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:<br>8. «Կոստանդին Ծիրանածին», թրգմ. Հ.Բարթիկյանի (Բյուզանդական աղբյուրներ, Բ), Երևան, 1970:<br>9. «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Հակոբյան, հատ. Ա-Բ, Երևան, 1951, 1956:<br>10. «Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898:<br>11. «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860:<br>12. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, հրատ. Խ. Թորոսյան, Երևան, 1975:<br>13. «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին», ի լոյս ընծայեց Մ. Էմին, Մոսկվա, 1860:<br>14. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938<br>15. Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Էջմիածին, 1896 |

| | |
|---|---|
| ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ | 2միջանկյալ ստուգում /գրավոր/ և ամփոփիչ ստուգում /բանավոր/: Յուրաքանչյուրը 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցաթերթիկները կազմված են 3 հարցից՝ 30, 30, 40 միավորներով: |

| | |
|---|---|
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ | Հաճախումներ-10 %<br>Ընթացիկ ակտիվություն-10%<br>Ընթացիկ ստուգում-20%<br>Ընթացիկ ստուգում-20%<br>Ամփոփիչ ստուգում-40% |

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| Գնահատման թվային միավորը | Տառային գնահատական | Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը |
|---|---|---|
| 96-100 | A+ | 5+ |
| 91-95 | A | 5 |
| 86-90 | A- | 5- |
| 81-85 | B+ | 4+ |
| 76-80 | B | 4 |
| 71-75 | B- | 4- |
| 66-70 | C+ | 3+ |
| 61-65 | C | 3 |
| 40-60 | C- | 3- |
| Մինչև 39 | D | 2 |

**Ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակը կրեդիտ/կրեդիտ ժամ-5/150**

| Հ/Հ | Թեմա | Լսարանային ժամեր | | Ուսանողի ինքնուրույն աշխատա-ժամանակը | Ուսանողի ընդհանուր աշխատա-ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար | | |
| 1. | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ Հայաստանի Բագրատունյաց թագավորության պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուրներ: Հայաստանի անկախության վերականգնման նախադրյալները: Հայկական թագավորության վերականգնումը | 2 | | 2 | 4 |
| 2. | ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ Երկրի անկախության ամրապնդումը: Պայքար Ատրպատականի Սաջյան ամիրայության դեմ: Արաբների վերջնական վտարումը Հայաստանից | 2 | | 2 | 4 |
| 3. | ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ Տեւական խաղաղության հաստատումն ու երկրի բարգավաճումը: Երկրի տնտեսական ու մշակութային վերելքը X դարի I կեսին: Անին մայրաքաղաք | 2 | | 2 | 4 |
| 4. | ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՏԱՐՈՆԻ և ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Արաբական ամիրայությունները Հայոց թագավորության կազմում: Հայաստանը, Բյուզանդիան եւ Համդանյանները: Ամիրայությունների բնույթն ու քաղաքական դերը երկրի կյանքում: Տարոնի և Արցախի իշխանությունները: | | 2 | 3 | 5 |
| 5. | ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԸ ԵՎ ԿԱՐՍԸ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ Վասպուրականը Հայաստանի անկախության վերականգնման համար մղվող պայքարում: Վասպուրականը Բագրատունյաց թագավորության կազմում: Վասպուրականի թագավորության ստեղծումը և դրա հետևանքները: Կարսը սպարապետների նստավայր և հայոց մայրաքաղաք: Կարսի թագավորության առաջացումը և ծաղկումը: Տարածքը և տնտեսական կյանքը | 2 | | 2 | 4 |
| 6. | ՏԱՇԻՐ-ՁՈՐԱԳԵՏԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԸ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ Կյուրիկյան թագավորությունը: Հայաստանի հյուսիս-արևմտյան գավառները: Սյունիքը | | 2 | 3 | 5 |
| 7. | ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ X ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ Երկրի խաղաղ բարգավաճում: Բագրատունյաց թագավորության հետագա զորեղացումը: | 2 | | 2 | 4 |
| 8. | ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ Բյուզանդական կայսրության առաջխաղացումը և Վասպուրականի թագավորության վերացումը: Բագրատունյաց թագավորության ճգնաժամը: Բագրատունյաց թագավորության անկում | 2 | | 2 | 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ IX-XI Երկրագործության և անասնապահության զարգացումը: Ժառանգական խոշոր հողատիրության զարգացումը: Վանական խոշոր հողատիրության ձևավորումը: Արհեստների անջատումը երկրագործությունից, արհեստների զարգացումն ու ճյուղավորումը: Ներքին և արտաքին առևտուրը, դրամական շրջանառությունը | | 2 | 2 | 4 |
| 10. | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ Հյուսիսային և հարավային մայրուղիների վրա գտնվող քաղաքները: Քաղաքային վարչության և ինքնավարության առաջացումը: Քաղաքների դերն ու նշանակությունը երկրի հասարակական-տնտեսական կյանքում | | 2 | 2 | 4 |
| 11. | ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳՆ Ու ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ Պետական կառավարման համակարգը, բանակը: Հասարակության սոցիալական կառուցվածքը: | 2 | | 2 | 4 |
| 12. | ՀԱՅԱՍՏԱՆԸ XI ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ Հայաստանը բյուզանդական տիրապետության ներքո: Սելջուկ-թուրքերի արշավանքների ժամանակաշրջանում: Հայաստանը սելջուկյան պետության կազմում | 2 | | 2 | 4 |
| 13. | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XII ԴԱՐՈՒՄ Հայաստանը սելջուկյան պետության քայքայման շրջանում: Տաշիր-Ձորագետի թագավորության անկումը: Սյունյաց թագավորության գոյամարտը: Անին Շադդադյանների տիրույթ: Խեղենեկյան Արծրունիները Վասպուրականում: Սասունի Թոռնիկյանները: Շահարմենների ամիրայությունը Խլաթում: Սալդուխյանները Կարինում | | 2 | 2 | 4 |
| 14. | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XI-XII ԴԱՐԵՐՈՒՄ | | 2 | 2 | 4 |
| 15. | ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ Պայքար Հյուսիս - արևելյան Հայաստանի ազատագրման համար: Հայ-վրացական զինակցությունը և հայկական հողերի ազատագրումը | 2 | | 2 | 4 |
| 16. | ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Զաքարյան երեք իշխանությունների կազմավորումը: Զաքարյաններին ենթակա իշխանական տները: Զաքարյան իշխանապետության վարչակարգը: Հասարակական-տնտեսական հարաբերությունները: | | 2 | 2 | 4 |
| 17. | ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ X-XII ԴԱՐԵՐՈՒՄ: Քաղաքների նոր վերելքը X-XII դարերում: Փոխանակայնին հարաբերությունների զարգացումը և քաղաքային վերնախավի ձևավորումը | | 2 | 2 | 4 |
| 18. | ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ Մոնղոլական առաջին հետախուզական | 2 | | 2 | 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | արշավանքը դեպի Անդրկովկաս: Ջալալ-ադ-Դինի արշավանքները Հայաստան: Մոնղոլների երկրորդ արշավանքը Հայաստան, երկրի նվաճումը: Հայաստանի հարավ-արևմտյան շրջանների նվաճումը | | | | |
| 19. | ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ Կառավարման համակարգը: Տեղական իշխանների նկատմամբ մոնղոլների վարած քաղաքականությունը: Հուլավու խանի նվաճումները և իլխանության ստեղծումը: Ղազան խանի միջոցառումները և Հայաստանի վիճակը նրա նախորդների ժամանակ: | 2 | | 2 | 4 |
| 20. | ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԿՈՒՄԸ Հողատիրության ձևերը: Հարկերն ու հարկահանման ձևերը: Հարկային քաղաքականության ծանր հետ հարկային քաղաքականության ծանր հետ հարկային քաղաքականության ծանր հետևանքները: Տնտեսության անկումը: Քաղաքների անկումը: Պայքար մոնղոլական տիրապետության դեմ: | | 2 | 2 | 4 |
| 21. | ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ Հայկական պետականության առաջացման նախադրյալները: Հայկական իշխանությունների առաջացումը: Հայկական պետության առաջացումը Կիլիկիայում: | 2 | | 2 | 4 |
| 22. | ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ Պայքար Դաշտային Կիլիկիայի համար: Քաղաքական իրավիճակը Մերձավոր Արեւելքում XII դարի վերջին: Թագավորության հռչակումը: Լևոն Բ-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը: | | 2 | 2 | 4 |
| 23. | ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ XIII ԴԱՐՈՒՄ Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Հայ-մոնղոլական դաշինքը: Պայքար Եգիպտոսի սուլթանության դեմ: | 2 | | 2 | 4 |
| 24. | ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ Հողատիրության տիպերը: Գյուղական համայնքը: Արհեստները, առևտուրը և քաղաքները: Արքունիքը, բանակը, դատական համակարգը: | | 2 | 2 | 4 |
| 25. | ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIV ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ Պայքարի հետագա սրումը Եգիպտական մամլուքների դեմ: Քաղաքական ճգնաժամի խորացումը: Թագավորության անկումը: | 2 | | 2 | 4 |
| 26. | ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐՈՒՄ Հայ մշակույթի վերելքի պատմական պայմանները: Դպրոցները և համալսարանները: Պատմագրությունը | | 2 | 2 | 4 |
| 27. | ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐՈՒՄ Իրավունքը և բնափիլիսոփայությունը Գրականությունը և արվեստը: | | 2 | 2 | 4 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ճարտարապետությունը և քանդակագործությունը: Նկարչությունը : | | | | |
| 28. | ՀԱՅԱՍՏԱՆԸ XIV- XV ԴԱՐՈՒՄ Պայքար վաչկատուն ցեղերի դեմ: Ամենայն Հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում: | 2 | | 2 | 4 |
| 29. | ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ Հայաստանը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում: Հայաստանի առաջին բաժանումը Շահ Աբասի արշավանքները և Հայաստանի քաղաքական վիճակը XVII դարի I քառորդում: | 2 | | 2 | 4 |
| 30. | ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄՀայ ժողովրդի ազատագրական ձգտումները թուրք-իրանական պատերազմների շրջանում: Արևելյան Հայաստանը Ղզլբաշների տիրապետության տակ: Հողատիրություն և հողային հարաբերություններ: Հարկային համակարգը: | | 2 | 2 | 4 |
| 31. | ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ Երկրի վարչական բաժանումն ու հողատիրական հարաբերությունները: Հարկային համակարգը: Քաղաքներն ու քաղաքային կյանքը: Հայ համայնքների իրավական դրությունը: | | 2 | 2 | 4 |
| 32. | ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ Դպրոց: Փիլիսոփայություն: Գիտություն: Պատմագրություն: Գրականություն: Երաժշտություն: Կերպարվեստ: Ճարտարապետություն: Տպագրություն | | 2 | 2 | 4 |
| Ընթացիկ ստուգում 1 | | | | | 5 |
| Ընթացիկ ստուգում 2 | | | | | 5 |
| Ամփոփիչ ստուգում | | | | | 10 |
| Ընդամենը | | | | | 150 |